

թէ գեղեցկագիտական հանգամանքով մը : Ջոր օր. լեռներու նկարագրէ տեսարանը ոչ թէ իրենց կանոնաւոր ձեւէ կը ծագի, այլ ընդհակառակն անոնց խառնխուռն և անա- կընկալ հակադրութիւններէ, որոնց վրայ պէտք է աւելցնել յուսոյ և գոյներու խաղերը :

Առաջին կանոնաւոր ձեւերը բիրեղացման մէջ կ'երևան, բայց ուղիղ գծեր, եռանկիւն, ներ ու քառանկիւններ գեղեցիկ ըսուելու հանգամանքը չունին և անոնց ալ գեղեց- կագիտական սպաւորութիւնը շատ սահմա- նաւոր է : Այսչափ է ահա բնութեան առա- ջին թագաւորութեան մեզ ընծայել կրցածը :

Բնասական քաղաշտրուքիւն : — Էական, բու անհատականութիւնը գործարանաւոր բնութեան միայն կը սկսի : Իրաւ, բիրե- ղացած մարմին մը իր կանոնաւոր ձևին շնոր- հի ունի տեսակ մը անհատական միութիւն, բայց այդ միութիւնը իրեն տուող զօրու- թիւնը իր արդիւնքներուն աւարտմանէն ետքը անգործութեան մէջ կը մնայ : Բաց աստի այս զօրութիւնը կը գործէ միայն համասեռ նիւթերու վրայ, զոր կը միացնէ առանց փո- փոխելու : Իսկ բոյսին մէջ միութեան սկզբ- բունքը անտաշ գործունէութեան մը կեդրոնն է : Սերման առաջին խրտուռներէն սկսած մինչև բոյսին մահը, այդ գործծոն կեդրոնը միակերպ կը ձկտի բոյսին զանազան գոր- ծարանները միաւորելու կամ ազատելու, առ փոքր փոքր իւրացնելու՝ զանոնք իր յա- տուկ զօրութեամբը յեղափոխելով՝ այն զա- նազան տարբերք որովք կը կազմէ իր տե- սանելի ձեւը : Այս իսկ է գործարանաւոր կե- մաց սկզբունքը :

Սերմնէ բոյսի մը մէջ երեք բան կրնայ նկատուիլ, նախ իր մարմինը կամ այն զա- նազան նիւթերը որ իրարու կը միանան զայն կազմելու համար : Երկրորդ իր պաշտամունքը կամ իր զանազան գործարաններուն գոր- ծունէութիւնը՝ որոնցմէ կը հետևի ձևին զար- գացումը, և վերջապէս այն սկզբունքը որ այս պաշտոններուն իբրև կ'ապնէ և գործարա- նաւոր զօրութեանց զանազան խաղերուն օրէնքը :

Երկու առաջին հանգամանքով, այսինքն նիւթով և զօրութեամբ, բոյսը կը պատկանի

իրական աշխարհին, բայց երրորդ սկզբունքով արդէն կը վերանայ բարձրագոյն գիւրջի մը, վասն զի այս կեդրոնական միութիւնը որ կը տիրէ միանգամայն թէ՛ նիւթին և թէ՛ զօրութեանց վրայ, չի կրնար ըլլալ ինքը ոչ զօրութիւն, ոչ նիւթ, այլ անտարակոյս աննիւթ սկզբունք մըն է՝ մտաց ըմբռնելի, վասնզի անհնար է ամէնէն պարզ գործա- րանաւորութիւնն անգամ կոյր զիպուածի մը վերագրել :

Թ. ԹԵՐԱՅԵԱՆ

Շարայարեղի



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՆԷ ԴԷՊ Ի ԱՆԿԻՐԻՍ

ՈՒՂԵԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

(Շար. տես յէջ 227)

Գ.

Ուրբաթ, 30 ապրիլ 1897.

Ձի կը հեծնամ ժամը 12ին և ճամբայ կ'եննամ գէպ կ'այարանը, քիչ մը կանուխ կը մեկնիմ որպէս զի հանգիստ ժամանակ ունենամ ձիաւորաց հոն հասնիլը տեսնելու :

Ամէն ուրբաթ — որ Թուրքաց համար կիւ- րակի է, — ընդարձակ և ամենաշիտակ դաշ- տադետնի մը մէջ կը խաղացուի ձիերիտ կու- շուած խաղն : Քաղաքէն զուսկանելու կու- շան բազմամիւ ձիաւորներ հեծած իրենց փառաւոր նշոյգներուն վրայ՝ որոնք թամ- բուած են ամենածոխ կերպով : Խուռն կը զիմեն գէպ կ'աշուր, երկու խմբի կը բաժ- նուին և իսկոյն կը սկսի խաղն : Մէկ բա- նակի ձիաւոր մը ամենայն արագութեամբ կը մղէ իւր ձին թշնամի բանակին դէմ, և քանի մը քայլ հեռուէն ուժգնակի կ'արձակէ գաւազանով մը՝ որով զինուած է, ջանալով հարուածել ևսկու մը զուսկը. ձիերն վար- ժած այս գործողութեանս, այն ինչ գաւա- զանն կ'արձակուի, իսկոյն ամենայն արագու-

թեամբ ետ կը դառնան և կը ջանան հաս-
նելու իրենց խմբին որ կը հալածուի բազ-
մաթիւ ձիաւորներէն, որոնք կը ջանան իրենց
զաւազաններով թամբի վրայէն վար ձգել
գրգռողը : Ընդարձակ դաշտապետին մէջ կա-
տարուած այս կատաղի ընթացքն կը վեր-
ջանայ, եթէ հայածուող ձիաւորն կարենայ
հասնիլ իւր բանակը, բայց եթէ նա իւր
ձիոյն վրայ վստահացած դեռ բանակէն ալ
անդին անցնի, հալածուի՞ն կը շարունակուի-
ն : Նոքա փոխադարձ կռուի կը գրգռեն զիրար,
և ով որ պիտի նետէ կը պոռայ Ա՛լ պա-
պամ, իսկ հալածողն կ'ոռնայ Շիմոսի գա-
ֆանը քեսէրիմ (հիմայ գլուխդ կը կտրեմ),
և այս ամէն բան կը կատարուի կոկորդալիւր
և անարտասանելի հնչամբ ձայնի, արագ
շարժումներով և զաւազանի պտույտներով,
եղերեքական և վայրագ պաղարկումներով ու
րոնք կ'ողկորեն հասարակ ժողովուրդը :
Մէկն ասիկ կը վազէ, միւսն անկէ, ձիերն
մերթ արագաթռիչ կը սուրան, և մերթ յան-
կարծ իրենց յետակողման ոտից վերայ
կանգնելով վայրիկ մը կը կենան, վերստին
ձեռք ձգելու համար իրենց այդ կատաղի
ընթացքը ուրիշ ուղղութեամբ մը. տղայք
բոլոր այս անսպասելիարանքին մէջ աներկիւղ
կ'երթան ու կու գան ժողովելով գետին ըն-
կած գաւազանները, որպէս զի զանոնք պար-
ձեալ ձիաւորաց տան, որոնք մեծ ճարտա-
բութեամբ կ'առնուն զանոնք անցնելով ա-
րագապէս անոնց ճովէն՝ ծած իրենց նոցման-
րուն վրայ. հանդիսատեսներու այդ բովան-
դակ ամբոխին մերթ ընդ մերթ զօրաւոր
ոռնալ մը՝ կ'աւետէ լաւ կերպով ուղղուած
հարուակի մը յաջողութիւնը, և անոր հա-
կառակ զժբախտ ձիաւորի մը անկումը : Ե-
րեկոյեան պէմ, կը տեսնուին դաշտին վրայ
բարբարոսաբար սպանուած ձիերէն զատ՝
նաև բազմաթիւ կտրուած գլուխներ և ճովուած
մարմիններ : Խաղի ոչ մէկ բանով չընդհա-
տուիր. և այն ժամանակ միայն կը վերջա-
նայ՝ երբ ձիերուն անակուշտ բոլորովին
կը պատաստուի արարական սայրասուր աս-
պանդակներէն, և իրենց յոգնածութենէն այլ
և չեն կրնար կանգուն կենալ իրենց սրունից
վրայ : Տեսարանն հետաքրքրական է թէ՛

հոն եղող ձիերու ահագին բազմութեան և
գեղեցկութեան կողմանէն, և թէ այն գոյն-
զգոյն և շատախոս ամբոխին՝ որ ամենաշ-
խոյշ երևոյթ մը կու տայ այս խաղին :
Հանդիսատեսներն միայն երկի մարդիկնեք են,
բնաւ չեն տեսնուիր հոն կանայք : Տեսա-
րանը վերջանալով, բովանդակ այդ ամբոխն
կը շարժի և շաղկապիելով կը վերապառնայ
քաղաքը : Իմ վրաս շատ տպաւորութիւն
ըրաւ ձիոց գեղեցկութիւնն՝ որոնք ընդհա-
րապէս բոլորն ալ չերթէկ և արարական զու-
գուած ձիեր են, և ամենաստակաւ պնդի կը
ծախուին. գեղեցիկ ձիու մը միջին արժէքն
կրնայ ըլլալ տասնհազար մինչև երեսուն
տանկական լիւրայ. սովորական ձի մը կ'արժէ
երեքէն մինչև վեց լիւրայ, էլէ մ'ալ աւելի
նուազ գնով՝ որ տասնէն մինչև տասնուհինգ
լիւրայ կ'արժէ : Բոլորն ալ անվարձ ձիեր են.
անոր համար քայլ մ'առնուլ չեն գիտեր .
ուզածդ ընել տալու համար քրտնջնել պէտք
է զանոնք, իրենց բերինք մէջ դրուած բար-
բարոսական սանձն — որ հատու կզակա-
կալով մը միացած է — բոլորովին կը փա-
ցընէ զանոնք : Եւ սակայն, իրենց բնաւ-
բութիւնն շատ լաւ է. անկեղծ, կը մտեր-
մանան ձիաւորին հետ. բայց որ մեծն է,
պողովաւտ կարթեր ունին, մազցնելով կ'ենեն
զանովներն երկու վրայ և պարձեալ հիանալի
երազույթեամբ վար կ'իջնեն անոնց վրայէն :

Տեղայն բնակիչքն տարօրինակ աւելորդա-
պաշտութիւններ ունին ձիուն վրայ, և բիծե-
րու կամ գոյներու մասին, զոր օրինակ,
կ'ըսեն, թէ չորս ոտքը սպիտականիչ ձին
գժբախտութիւն յառաջ կը բերէ, ճակատին
վրայ աստղանիչ ունեցողը լաւ է : Եթէ ձին
վերաւորուի, վերքը կը լուսն մէզով և յետոյ
օդի կը սրսկեն և կը շփեն աղով : Եթէ ձի մը
տկաբութեան և կամ ուրիշ ու իցէ արդելիք
մը համար այնքան երազաշարժ չէ ընթացքին
մէջ, ձիբիտ խաղցընելու կը տանին, որպէս
զի, կ'ըսեն, անով քիչ մը արթննայ. և լաւ
մը կոփոց կու տան խեղճ կենդանւոյն՝ պա-
հանջիւղով իրմէն այն զօրութիւնը՝ զոր չունի :
Ահա թարածութեան այս գրովիւնն քիչ
ժամանակէն կը կարճեցնէ անոնց կեանքը,
վասն զի տառուերկու կամ տասնուհինգ

տարեկանէն վերջը այլ ևս բուրբողիւն ան-
գործածելի կը գտնան. որոնք՝ ընդ հա-
կառակն ընտիր ցեղէ ըլլալով՝ եթէ լաւ
գարմանուէին կրնային երկար տարիներ գոր-
ծածուիլ:

Շաբաթ, 1 մայիս.

Այսօր վաճառանոցը կ'երթամ հնամա-
նառէ մը քանի մը բաւեր գնելու համար,
բայց չեմ կրնար բան մը գնել, վասն զի
նա ծանշնալով որ ես եւրոպացի եմ, կ'ուզէ
իրեն ունեցած առարկաները՝ որոց զինը կը
հարցընեմ, իբր հրաշակերտներ ծախել ինձ,
այս պատճառաւ ալ ինծմէ անհաւատալի
զինքն կը պահանջէ, նաեւ չուզեր ալ բնաւ
զեղչ ընել: Ունի անաղապղնէէ բազմաթիւ
հոսովակական առարկաներ՝ որոնք յիբաւի
շատ գեղեցիկ են, նաեւ չափաւոր հաւաքա-
ծոյ մը հոսովակական և Անկիւրիոյ դրամնե-
րու: Երկարատեւ սակարկութիւն մի ընելէն
յետոյ, վերջապէս կը յաջողիմ գնել պղնձէ
քանի մը արգի փախէներ, զորս կ'ուզէր իբրեւ
հնութիւն վաճառել ինձ: Ամբողջ այս ա-
ռաւոտս կ'անցընեմ հետաքրքրուելով վաճա-
ռականութեամբ, և նախաճաշիս ընելէն
վերջը դարձեալ կը սկսիմ իմ շրջագայու-
թիւններս գերեզմանատանց մէջ, հանդիպե-
լով դարձեալ ճարտարապետական հին կտոր-
ներու:

Կիշրակի, 2 մայիս.


Հայ պարոն մը, հարուստ վաճառական
ցորենի, կը գրկէ ինձ իւր փառաւոր ձին,
որպէս զի կարենամ ես շրջագայութիւն
մ'ընել: Ինծի առաջնորդ կ'առնում Հաճին՝
որ կ'ուզէ պտոյտ մ'ընել տալ ինձ քաղա-
քէն դուրս: Շատ երջանիկ եմ վերջապէս
ձեռք ձգելուս համար երազներմաց լաւ ձի
մը, որ հագուազիս բան մ'է Անատոլիոյ մէջ:
Պայծառ առաւօտ մ'է, ախորժով մը կը
շնչեմ գարնան քաղցրասիւք զովութիւնը: Այս
բաւական երկարատեւ ճամբորդութեանս մէջ
կը պատահիմ մի քանի նկարչական խմբերու՝
որոնք հետաքրքրութեամբ ինծի կը նային.
կ'անցնիմ լայն ճամբէ մը և Էնեկէրէ առջոյն
եզերքէն երթալով կը հասնիմ երկու բլրոց

մէջ գտնուող նեղ ձորին մէջ: Ինչ հիանալի
տեսարան: Ելէ կողմէն Անկիւրիս, իբրեւ
արծուի բոյն մը հանգչած սեպացեալ և ա-
պառաժուտ բլրան մը ծայրը, և գրեթէ ան-
մատչելի դարձած իւր պարսպաց կրկին շրջա-
պատու. իսկ միւս կողմէն, ուրիշ գոտաւա-
մատչելի բլոր մ'այլ՝ որուն վրայ կան դիտա-
նոցներն: Իմ միտքս երեւակայութեամբ յան-
կարծ կ'ելնէ կը բարձրանայ զէպ ի այն ժամա-
նակները՝ յորում քրիստոնէայ պալադիւնեանք
ամրացած այդ պարսպաց մէջ՝ կը կոռէին
ասիական խառնիճաղանձ բազմութեան զէմ,
որոնք դանդաղաքայլ կու գային կը մտե-
նային լայնածաւալ դաշտագետնի միջին: Ինչ
ահաւոր և սարսափելի տեսարան պէտք էր
ըլլալ՝ սրբազան մոլոտանութենէ մը մղուած
այդ խուռն ամբոխին յարձակումը զէպ ի այդ
սեպացեալ գետիվերներու վրայ. դեռ արշա-
տավայրին չտիրած ճրքան արդեօք քարէն
թափուած սոյն այս երկրի վրայ՝ ուր ես այժմ
կեցած կը դիտէի: Յաղթողներու վայրագ սու-
նայներն խառնուելով յաղթուողաց ողորմա-
զին ողբոց և վիրաւորելոց կսկեցուցիչ ա-
ղաղակաց հետ կարծես կը հասնէին գիւ իմ
ականջս: Հաճին յանկարծ սփաթեցոյց զիս
իմ երեւակայական մոտածութիւններէ՝ ցուցը-
նելով ինձ հեռուն երկու անձներ՝ որոնք կը
թաւալէին գետնին վրայ: Կարծեցի, թէ կոխ
կայ, բայց Հաճին ինծի ըսաւ, թէ անոնք
սովորական փեռնիվաններ են (ըմբիշ), և
հաւանական է որ մերձակայ տան մը մէջ
հարսանեաց հանդէս կը կատարուի ինչպէս
որ իրօք ալ այնպէս էր: Առաջնորդս ինծի
կը պատմէ, թէ ինչպէս պահուած է այս
տեղ հարսանեաց հանդէսը կատարելու սո-
վորութիւնը խաղերով և զբօսանքներով, որոց
մեծապիւ կը մասնակցի ժողովուրդն: Փե-
սայի ունեւորութեան համեմատ, այս հան-
դէսներն կը տեսն աւելի կամ նուազ ժա-
մանակ. տունն բաց կը մնայ հանդիսից ամ-
բողջ տեւողութեան ժամանակ. սովորութիւն
է հանդիսականաց առջև հանել խորոված
գառն և ուրիշ տեսակ զովացուցիչ ուտելիքներ:
Այսպէս, դանդաղաքայլ անցնելով ամբոխի
մը միջին՝ որ ամենայն եռանդուն աշխուժիւ
կը հետեւէր ըմբշամարտութեան խաղերուն

իսկոյն կը ժամանեմ փեսային տունը: Ընդ-
արձակ գաւթին մէջ զետեղուած են խե-
ցեղէն ամաններ՝ լեցուն օշարակներով, սե-
ղաններ՝ որոց վրայ զիգուած են խորոված
գառան ամբողջ քառորդ մասն և ուրիշ աման
տեսակ տաճկական համադրամք. քիչ մ'անդին
կայ մանգալ (կրակարան) մը՝ որու վրայ կը
տաքցընեն խահուէի համար գործածուելիք
ջուրը:

Թբգմ. Հ. Ե. ԱՐԲԱՆԱՄԵԱՆ

Շարայարէրի



ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՔՈՒՆ

HYPNOTISME

(Շար. տես էջ 324)

ԳՆՈՒԻ ԱՌԱՋԻՆ

ՄԱԳՆԵՏՈՒԹԵԱՄԲ ՔՆԱՅՆՆԵԼՈՒ ԿԵՐՊԵՐՆ.

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՔՈՒՆ բուն իսկ էութիւնը կ'ուզենք ճանշնալ. բայց արդեօք պի-
տա յաջողի՞նք, և այն՝ ի՞նչ կերպով: Իւրա-
քանչիւր ոք գիտէ՝ թէ ներկայ վիճակին մէջ
մարդս չի կրնար ճանշնալ ուղղակի ո՞ր և
է իրի բնութիւնը և գոյացութիւնը: Վասն
զի մարդկային միտքն ոչինչ նուազ քան
աչքն՝ կարող չէ մտաւոր տեսութեամբ ըմ-
բռնել զոլոքն կարծուած իսկ իրաց ամբող-
ջական էութիւնը՝ որ տեսականորէ որոշուած
ըլլայ: Արդ ուրեմն ինչ որ ուղղակի չենք
կրնար ճանշնալ, անուշղղակի կ'ըմբռնենք
զայն:

Այս կրկին սկզբունքը կը հաստատեն և
կը հաւաստեն նախ՝ իւրաքանչիւր մարդոյ
փորձն և երկրորդ՝ ամենայն իմաստնոց վար-
դապետութիւնն: Եւ այս կրկին սկզբանց վը-
րայ հիմնեալ կը հաստատենք նախ՝ որ հարկ

է համեմատութիւն մ'ըլլայ ի մէջ այն ազ-
գակաց որոնք իր մը յառաջ կը բերեն՝ և
այդ յառաջ եկած իրին. դարձեալ՝ թէ իրի
մը յատկութիւնք են ցումունք նոյն իրին
ուսկից կը ծագին, և մարդս՝ իրաց էութիւնը
քննելու համար նախ կը քննէ անոնց յատ-
կութիւնները և գործողութիւնները, և մեր
միտքն այս եղանակաւ կը հասնի ի ծանո-
թութիւն նոյն իրաց էութեան. զոր օրինակ
ծառի մը տեսակը կը ճանշնանք իրեն պտուղ-
ներէն, և գետոյ վրայ գաղափար մը կը
կազմենք անոր աղբերաց ձեռքով: Բովան-
գակ իմաստասիրական դիտութիւնն այս
սկզբան վրայ հիմնեալ է, զոր օմանք ի նոր
իմաստակաց կ'ուզեն քանդել երկու երեք
խօսք յօդս արձակելով՝ առանց իրենց հակա-
ռակորդաց փաստերը ի մէջ բերելու և հերքե-
լու, և կը կարծեն թէ յաղթութիւնը ձեռք
բերին. ինչպէս ազգային տարօրինականութեան
չեւմ պաշտպաններն միոյն գրուածոց մէջ
կը տեսնուի: Եւ այս է սղէտ ռամկին աչքին
փոշի նետել՝ որպէս զի ճշմարտութեան լոյսը
չկարենայ նշմարել. սակայն յուսալով՝ որ
այդ կարևոր կէտին վրայ յարմար առթիւ
զբաղինք՝ կը զառնանք մեր նիւթին:

Մագնիսական քնոյ էութիւնը ըմբռնելու
համար երկու հետեւեալքն կարևոր են. Ա. Իճն
պաշմաններով և ինչպիսի՞ ազդեցութեանց
ներքոյ առաջ կոչ գալ մագնիսական քռանն.
— Բ. Ինչպիսի՞ երևոյթներ առաջ կը բերէ:
Այս երկու կարևոր կէտերուն առաջինը կը
պարզենք՝ բացատրելով թէ իճնպէս մագնի-
սական քռանն առաջ կոչ գալ:

Ա

Մագնիսական բուն շատ բարի մարդ-
կանց կասկածախի եղաւ՝ բուն իսկ զայն ա-
ռաջ բերելու համար գործադրուած միջոց-
ներուն պատճառաւ. և մագնիսութեան հա-
կառակորդք այս գործադրուած միջոցաց ան-
տեղութիւնէն փաստ մը կը հանեն հակառակ
մագնիսական քնոյ: Մենք այս փաստը ընդ-
լայնելով մէջ պիտի բերենք. սակայն որպէս
զի այդ լաւ կերպով պարզուի՝ հարկ է ա-
ռանձին մտադրութեամբ նախ պարզենք հոս